Digitally signed by
MARO GRIGORYAN 5102760196
Date: 2023.10.05 15:28:16

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրենի Ժ/Պ Մ. Գրիգորյան /_____/2023թ.

_____

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արարատի մարզ գ.Արարատ

Արարատ գ. №2 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, III բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Մարինե Վարազդատի Պողոսյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023թ–2024» *ուստարի*

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	*Միջոցառման բովանդակությունը*	*Ծանոթություն*
05.09.2023	«Իմ պահվածքը դպրոցում» . զրույց դպրոցական առօրյայի, աշակերտական կարգ ու կանոնի մասին	Ներկայացնել դասացուցակը, վերհիշեցնել դպրոցական կանոնները:
12.09.2023	Զրույց. « Պաշտպանություն պայթյունների, օդային տագնապի ժամանակ»	Ճշտել, թե ովքեր ունեն նկուղներ: Նկուղների նախապատրաստում ընտանիքների կողմից:
19.09.2023	Սեպտեմբերի 21-ը անկախության օրն է	Զրույց հայ ժողովրդի տարած հաղթանակներից , ձեռքբերումներից , այսօրվա խնդիրներից:
26. 09. 2023	«Գիրքը իմ կյանքում». զրույց գրքի ստեղծման պատմությունից, առաջին գրքերից	Հասկանան գրքերի դերն ու նշանակությունը մարդու կյանքում:
03. 10. 2023	Համերաշխ դասարան	Միմյանց հետ ճիշտ վարվելակերպի, միջանցքում , դասարանում օրինակելի պահվածքի կանոնների մշակում սովորողների կողմից:
10.10.2023	Իմ իրավունքներն ու պարտականությունները	Իմանան, որ և իրենք ունեն իրավունքներ, և ուրիշները: Նաև բոլորն էլ ունեն պարտականություններ:
17.10.2023	Իմ վարքը տանը և շրջապատում	Իմանան, թե ինչպիսի վարքագիծ պետք է ուն ենալ տնից դուրս, անծանոթ միջավայրում՝ թանգարանում ,կինոթատրոնում, զբոսայգում, սրճարանում:
31.10.2023	Համերաշխ դասարան	Ճանաչեն իրենց դասընկերներին ավելի մոտիկից՝ իմանալով նրանց նախասիրությունները, ուժեղ և թույլ կողմերը:
07.11.2023	Ազնվություն և ճշմարտացիություն	Կարողանան առանձնացնել ազնիվ և անազնիվ արարքները:
14.11.2023	Թեմա. ‘’ Մաքրությունն ՝ առողջության երաշխիք’’	Զրուցել սովորողների անձնական հիգիենայից, դասարանի, տան, շրջապատի, մոլորակի մաքրությունից. իմ դերը այս հարցում:
21.11.2023	« Խաղալիքների տունը» ստեղծագործության ընթերցում և քննարկում	Կարողանան վերլուծել հերոսների վարքագիծը, ինչպես կփորձեն ընդօրինակել նրանց, օգնեն ուղղելու սխալները:

28.11.2023	Հ . Թումանյան՝ ‘’Քեֆ անողին քեֆ չի պակսիլ’’	Կարողանան վերլուծել հերոսների վարքագիծը, ինչպես կփորձեն ընդօրինակել նրանց:
05.12.2023	Թեմա. ‘’Դեկտեմբերի 7-ը հիշատակի օր է”	Զրույց. ԱԻ_ի ժամանակ ինչպես պետք է պաշտպանվել, երբ գտնվում ես տարբեր վայրերում:
12.12.2023	Թեմա. ‘’Համակարգիչն ընկեր, թե՞ թշնամի”	Սովորեն համակարգչից ճիշտ և գրագետ օգտվելու կանոնները: Օգտագործեն այն տեղեկատվություն ձեռք բերելու, ինքնակրթվելու, աշխարհաճանաչողության նպատակով:
19.12.2023	Թեմա. “ Հանդուրժողականություն և բարություն””	Սովորեն ընդունել դիմացինին այնպիսին , ինչպիսին որ նա կա: Հարգեն դիմացինի կարծիքը, ճաշակը, նախասիրությունները:
09.01.2023	Թեմա՝ “ Առողջ և անվտանգ ապրելակերպ”	Զրուցել առողջ ապրելակերպից, այն սովորություններից, որոնք վտանգում են մարդու առողջությունը՝ անառողջ սնունդ, անռեժիմ ապրելակերպ, քնի խանգարումներ, պասիվ կյանք…
16.01.2024	Թեմա՝ “Գնահատիր ժամանակը”	Զրուցել օրվա ռեժիմից, հանգստից: Սովորեն պլանավորել օրը՝ առաջնահերթությունները տալով կարևոր բաներին: Մեկնաբանեն “Ժամանակը ոսկի է” առածը, փորձեն իրենց կյանքում կիրառել սովորածը:
23.01.2024	Թեմա ՝ ”Ինքդ սովորեցի՞ր, սովորեցրու նաև ընկերոջդ”	Զրուցել փոխադարձ օգնության, ընկերասիրության մասին: Իմանան, որ սովորեցնելով ուրիշին, սովորում են նաև իրենք: Ձևավորել “ Մեր ուժը միասնության մեջ է” մտածելակերպը:
30.01.2024	Զրույց. “ Հունվարի 28-ը հայոց բանակի օրն է”	Ծանոթանան հայոց բանակի անցած պատմությանը՝ սկսած Հայկի և Բելի պատմությունից մինչև մեր օրերը: Ձևավորել գնահատանք այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց կյանքն են նվիրաբերել հայ ժողովրդի գոյապահպանման գործում:
06.02.2024	Թեմա՝ “ Կոնֆլիկտների հաղթահարում” : Պատմություն՝ “Պարողը”	Սովորեն հարթել կոնֆլիկտները՝ այնպիսի որոշում կայացնելով, որպեսզի ոչ ոք չտուժի: Հարգեն դիմացինի նախասիրությունները, դիմացինն էլ այնպիսի վարքագիծ դրսևորի, որ չոտնահարի մյուսների հանգստի իրավունքը:
13.02.2024	Թեմա՝ “ Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում”	Սովորեն համագործակցել խմբի անդամների հետ: Առաջիկա շաբաթվա ընթացքում քննարկեն և

		համատեղ պլանավորեն իրենց խմբի պաստառպատրաստումը: Նախապատրաստեն նաև որևէ 13.02ստեղծագործության բեմադրում:
20.02.2024	Մայրենիի օրվա կապակցությամբ Հասմիկ Ափոյանի “ Խաղալիքների տունը” գրքի քննարկում:	Սովորողները հանդես կգան որպես խաղալիքների քաղաքի բնակիչներ, կմասնակցեն քննարկմանը, կկատարեն եզրահանգումներ: Դասի ավարտին սովորողները միմյանց կնվիրեն գրքեր:
27.02.2024	Թեմա՝ “ Առողջ ու անվտանգ ապրելակերպ”	Կքննարկվեն անվտանգ ապրելակերպի մասին որոշ կարևոր մտքեր՝ կապ պահպանելով շրջակա աշխարհը առարկայի հետ:
05.03.2024	Թեմա՝ “ Պաշտպանել բնությունը, նշանակում է պաշտպանել հայրենիքը”	Զրուցել “Երկիր մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը” ծրագրի մասին՝ բացատրելով, որ յուրաքանչյուրս ունի իր դերն ու գործը մոլորակի և մեր հայրենիքի պաշտպանության գործում:
12.03.2024	Այցելություն Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան	Էքսկուրսիայից առաջ զրուցել այն մասին, թե ով է Վ. Սարգսյանը, որն է նրա դերը հայ ժողովրդի կյանքում: Էքսկուրսիայից հետո վեր հանել աշակերտների ստացած տպավորությունները, ինչ նոր բան իմացան Մեծ հայրենասերի մասին:
19.03.2024	« Իմ պահվածքը գրադարանում, կինոթատրոնում , սրճարանում, Պլանետարիումում»: Խնկո Ապոր կյանքը և գործունեությունը:	Միասին քննարկել, թե ինչպիսին պետք է լինի պահվածքը գրադարանում, սրճարանում, կինոթատրոնում, հասարակական վայրերում: Քննարկել Խնկո Ապոր կյանքը, գործունեությունը, նրա դերը հայ գրականության մեջ:
02.04.2024	Թեմա՝ « Անձնանուններ» : Դասարանի սովորողների անունների ստուգաբանություն	Քննարկել, թե դասարանի բոլոր աշակերտները արդյոք գիտեն իրենց դասընկերների անուն - ազգանունները: Որոնել և գտնել դասարանի աշակերտների անունների բացատրությունը՝ ճշտելով ծագումը, նաև, թե երեխաները ումից են ժառանգել իրենց անունները:
09.04.2024	Թեմա՝ « Մասնագիտությունների մոլորակ»	Զրուցել տարբեր մասնագիտությունների մասին՝ առանձնացնելով դրանց դերը և օգտակարությունը մարդկանց կյանքում: Փոքրիկ հարցազրույց անցկացնել սովորողների հետ, թե ինչ կուզեն դառնալ, երբ մեծանան:

16.04.2024	“ Եղեռնը և նրա հետևանքները հայ ժողովրդի կյանքում” համառոտ զրույց՝ սովորողների տարիքին համապատասխան	Վեր հանել սովորողների նախնական գիտելիքները ապրիլի 24- ի հիշատակի օրվա մասին : Ամփոփ ներկայացնել , թե ինչու է այն դառը հետևանքներ թողել հայ ժողովրդի կյանքում:Լսել սովորողների կարծիքներն այն մասին, թե իրենք ինչպես կարող են հզորացնել և շենացնել մեր երկիրը:
23.04.2024	Զրույց սովորողների հետ. Թեմա՝ “Ինչն է քեզ հետաքրքրում”	Կազմակերպել մտերմիկ զրույց սովորողներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Փորձել, որ ընկերները պատասխանեն միմյանց հարցերին, այնուհետև նոր կատարել լրացումներ:
30.04.2024	Դասագրքերի վերանորոգում	Ստուգել դասարանի բոլոր սովորողների դասագրքերի վիճակը, անհրաժեշտության դեպքում օգնել՝ վերանորոգելու վնասված էջերը:
07.05.2024	‘’ Մեծ աշխարհի իմ փոքրիկ անկյունը՝ Դավալու”դասի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում	Համագործակցել դասը վարող ծնողի հետ, լսել խմբերի աշխատանքների համառոտ բովանդակությունը:
14.05.2024		
21.05.2024	Ներկայացման դիտում՝ “ Չիպոլինոն և իր ընկերները”	Նախապես դիտել մուլտֆիլմը, քննարկել, հիշել հատվածներ անցած դասանյութից: Զրուցել այն մասին, թե ինչպիսին պետք է լինի վարքագիծը տրանսպորտում, թատրոնում: